*կարդամք օգնութիւն, զքո նշանդ պատուեմք, եւ զանուն քո անուանեմք. դու զմեզ փրկեա վասն մեծի փառաց քոց: Եւ այլ բազում եւ ազգի ազգի խեղճ եւ ողորմելի բանքեր տեսաք, զի անօրէն Տաճիկքն՝ ազգն Հագարու զրգվին եւ նեղեն զազգս քրիստոնէից. եւ իբրեւ ընդ լծով ծառայութեան տառապեցուցանեն եւ չարչարեն, որպէս Եգիպտացիք զԻսրայելացիսն. որոց Քրիստոս լիցի վրէժխնդիր. ամէն:*

*Իսկ երրորդ դուռն եօրղանճիք, քէթարչիք, սիրմաճիք եւ այլ խանութնի ազգ եւ ազգ:*

*Չորրորդ դուռն փինճան արախճինչիք եւ խաւախչիք: Եւ այլ սակաւ մի յառաջ՝ քարէ մաղազիք, ուր գնոջ ազնիւ ջուխանի ծախեն, փռանկի սկէոլէթ, եթմիչչլա կամ չլա, եւղչլայ, մախմուրնի, եւ զանազան ջուխանի եւ այլն:*

ՀԻՆ ՊԷԶԷՍՏԱՆ

*Իսկ այլ օրն գնացաք ի հին պէզէստանն. եւ անդ եւս ազգի ազգի կերպասք, ղումաշք, եւ անօթք եւ ձիոյ թամք, ղանղանաւանդք, լկամք, տիկտիկք՝ արծթէ ոսկէջրած, ղալամ քաշած եւ սիրմայ, այլ եւ քարամբք, ակամբք եւ մարգարտով ընդելուզած, գնոջ եւ անգիւտք, որ այլ տեղ ոչ գտանի: Եւ այլ տեղ*

326 *տաճիգն*: — 329 *յեգիպտացիք*: — 330 *յորոց*: — 347 *զոր*: